№ 291 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 291

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՕՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն տեղով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE - ST LAZARE

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ

(Հ 5-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական Մէկ ռուբլի։
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի և Հնդկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներին խնդրվում է կացնել փոխադրական ցանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ մարդի, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (ստացիոնար) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն կանացի հիւանդ ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկներ՝
Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ե. Վեսելօ լզօրով
Լ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Ռ. Ե. Տէր-Ներսէսեան
Լ. Ր. Փիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
հ. կ.) առ. 742. 100—23

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաբարեան

(Մանուկ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—3.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ա.Հ.Կ.) առ. 634. 100—48

ԲԺԻՇԿ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3-րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 959. 50—3

«ՄՇԱԿԸ» 1915 ԹՒԻՆ

Այսօրվայ «Մշակը» կնքում է իր 44-դ տարին։

Անհետացող տարին, 1915 թուականը, դժնդակ և աղէտալի հայութեան համար, եղաւ և ծանր տարի բարոյական տանջանքների տարի «Մշակի» համար։

«Մշակը», որ ամբողջ 44 տարի եղել է հայ ժողովրդի և նրա լաւագոյն իղձերի, ձգտումների արտայայտիչը, նրա վշտերի, ցաւերի երգիչը, հիմնադիրը հայ ժողովրդի ազատագրական տենչանքների, ստիպված էր երկար և յամառ պայքար մղել այն տարրերի դէմ, որոնք ամբողջ տարիներով երկնած այդ ազատագրութիւնը փորձեցին տանել արկածախնդրական շաւղով, այլ ոչ հեռատես, խոհեմ քաղաքականութեամբ, և ի հարկէ, ինչպէս և պէտք էր գուշակել, իբրև անփորձ և անհմուտ նաւատիներ ու արկածախնդիր լուզորդներ՝ տարան ընդհարեցին նաւը ժայռերի և խորտակեցին։

Մի կողմից հայութեան հասած սոսկալի աղէտը, միւս կողմից «Մշակի» ձախակողմեան և աջակողմեան հակառակորդների անուղղամիտ, անվայել յարձակումները, համեմված անձնական քսութիւններով և բանտարկութիւններով, կարող էին վհատեցնել խմբագրութիւնը և լքումն առաջ բերել նրա մէջ, եթէ մեզ խրախոյս և զօրավիգն չը հանդիսանային մեր բազմաթիւ հաւատարիմ, բազմամեայ բաժանորդները, ընթերցողները և մեր աշխատակիցները, որոնք անդուլաճան կերպով շարունակեցին գործակցել մեզ՝ ղեկավարելու հասարակական կարծիքը։ Այդ աշխատակիցներից շատերը կը խոստովանեն, որ «Մշակի» խմբագրութիւնը բնաւ չը հանդիսացաւ անհիւրասէր, բծախնդիր, և թոյլ տուեց նոյն իսկ հայեացքներով և տեսութիւններով տարբեր բանակներին պատկանող գրականներին՝ ազատօրէն արտայայտել իրանց կարծիքները և հայեացքները. բաւական էր, որ այդ գրականները պատկանէին ընդհանուր առաջադիմական-ազատախոհ բանակին, որ նրանք տոգորված լինէին անկեղծ ձգտումներով՝ ծառայելու հայ ժողովրդին և լուսաւորելու նրա միտքը։ Նեղ կուսակցական կամ թայֆայական ոգին «Մշակի» մէջ բնաւ տեղ չը գտաւ, ինչպէս տեղ չը գտան ու վտարվեցին նրանք, որոնք կամենում էին պղտոր ջրի մէջ ձուկն որսալ կամ ժողովրդական տառապանքներն իրանց փառասիրութեան պատուանդան շինելու։ Բարեբաղդաբար, այդպիսիների թիւը շատ սահմանափակ եղաւ։

Սակայն «Մշակը» աշխատեց միայն տեսականօրէն չը ծառայել հայ ժողովրդին։ Տեսական, գաղափարական սպասաւորութեան հետ զուգընթաց, «Մշակի» խմբագրութիւնը գործնական միջոցների ևս ձեռնարկեց ծառայելու հայ ժողովրդին, փախստականներին՝ կազմակերպելով ընկերութիւններ, յանձնաժողովներ, հանգանակութիւններ կատարելով, իր խմբագրի և աշխատակիցների ձեռքով ուղևորութիւններ և այցելութիւններ կազմակերպելով, մասնակցելով զանազան ձեռնարկութիւնների, որոնց նպատակն էր փախստականներին օժանդակել։ Միայն յօգուտ փախստականների «Մշակը» կարողացաւ հանգանակել մօտ 83,000 ռուբլի, բացի յօգուտ կամաւորների ստացված գումարից, որ հասաւ մօտ 50,000 ռ. գումարի։ Մենք չենք խօսում այն աջակցութեան և օգնութեան մասին, որ մեր լրագրի խմբագիրը, իբրև նախագահ փախստականական յանձնաժողովի, մատուցանում է փախստականներին, ոչ միայն հայերին, այլ և անխտիր բոլոր ազգութիւններին։

Խօսքի հետ գործ—ահա այն նշանաբանը, որին շարունակ հետևել է «Մշակը» և որից բնաւ չէ շեղվել։

Եւ այդ ամենի մէջ մեզ օգնել են մեր աշխատակիցները, որոնց ամենքին խմբագրութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը և որոնց յորդոր է կարդում շարունակել նոյն անվեհերութեամբ, նոյն անձնուիրութեամբ իրանց սպասաւորութիւնը հայ ժողովրդին՝ սերմանելով բարի, ազնիւ սերմեր և չը մոռանալով, որ իրանք՝ այդ աշխատակիցները և հայութեան զանազան անկիւններում ցրված թղթակիցները կազմում են երկրի աղը։

Մեր այդ աշխատակիցներին, որոնց անունները բարոյական պարտք ենք համարում արձանագրել, այն է՝ Աբէլեան Ալ., Ագեան Մ., Աթանասեան Ա., Աղաջանեան Վ. ք., Աղասարեան բժ. Բ., Ամատեան դօկտ. Գ. (Շվեյցարիա՝ Լօզան), Ամօ-Խարազեան, Անանեան Արմէն, Անանուն Դ., Ապրեսեան Աբէլ, Ապրեսեան Զ. ք., Առաքելեան Ս., Ասլանեան Ա., Ասլանեան Ս. ք., Ատրպետ, Աւգալբէգեան Խ., Բաշինջաղեան Գ., Բեռեռ, Բունիաթեան Ա., Գաղթական, Գասպարեան Մ. (Հնդկաստան՝ Ռանգուն), Գասպարեան Յ., Գնունի Յովհ., Գողթնեցի Մժէժ, Դուլումճեան Տ., Գրիգորեան Յ. ք., Դանիէլ-բէկ Սօֆիա, Դանիէլեան Լ., Դարբինեան Արտակ, Դաւթեան Ա., Դերձակեան Մ., Դերենիկեան Ղ., Եղեկեան Ա., Եղիազարեան պրոֆ. Ս., Զաքարեան Սաթենիկ, Զօրեան Ստ., Էդիլեան Մ. ք., Թարմ-ոյժ, Թովմասեան Տ., Թումանեան Գ. ք., Ժամկոչեան Հ. (Պարսկաստան՝ Նոր-Զուղա), Իրօ, Իշխանեան Բ., Իսկէնդէրեան Ռ. Լալայեան Ե., Լեոնեան Գ., Lucifer, Խաչատրեան բժ. Վ., Խուրշիդ, Խօջամիր Յ., Խօջայեան Յովս., Մատուրեան Ալ., Կալկաս, Կուրղինեան Շուշանիկ, Կրասիլնիկեան Կոստ., Հայկունի Գ., Հորոմեան Ա., Ղազարեան Մ., Ղուլեան Առ., Մալխասեանց Ստ., Մանուէլեան Միք., Մարկոսեան Լ., Մարտունի Ալ., Մելիք-Աղաջ. Ալ., Մելոյեան Գ., Մենաթոր-Միրաժ, Մինասեան պրոֆ. Մ., Միսակ, Միրզեան Գ., Միրզայեան Գր., Միքայէլեան Կարէն, Մխիթարեան Արշալոյս, Մկրտիչեան Լեւոն (Եգիպտոս՝ Ալէքսանդրիա), Մկրտումեան Բ., Մուրադեան Ա. Յ., Մուրադեան Գէորգ, Մտրակ, Յակոբջանեան Յ. (Հնդկաստան՝ Սուրաբայա), Յարութիւնեան Ե., Յովհան Ս. (Պարսկաստան՝ Ղազվին), Նազարեան Ս., Նազարեան Տ., Նազարէթեան Ա., Նաւասարդեան բժշկապ. Բ., N. N., Շահազիզեան Լ. (Ռումինիա՝ Բուխարեստ), Շիրվանզադէ, Շեխեան բժ. Ա., Շովրեան Մ., Ոսկերչեան Ս., Զմշկեան Մ., Զօպանեան Ա. (Ֆրանսիա՝ Պարիզ), Պահարէ, Պայազատ Աբգար, Պապիկեան Վ., Պետ, Պետրոսեան Յ., Պէյլիֆի Մելիք, Պէրպէրեան Մ. Գ. (Ամերիկա՝ Ուստր), Պոլարիս (Հնդկաստան՝ Կալկաթա), Սազանդարեան, Սալ-Ման, Սարաճեան Խ., Սարգսեան Լ., Սարուխան Ա., Սիմէոնեան Ա. ք., Սինանեան Գ., Սուրխաթեան, Սպէնդիար Յ., Սօլովեան Յ., Սօյզադէ, Վ. (Պարսկաստան՝ Բաշտ), Վանեցի, Վարդանեան Գր., Վարդանեան Ե., Տարախչեան Մ., Տէր-Աւագեան Օլգա, Տէրեան Վահան, Տէր-Մելքիսեդեկեան Ս., Տէր-Մինասեան Եր., Տէր-Յովհաննիսեան Պետ. ք., Տէր-Յովհաննիսեան Ս. ք., Տէր-Յովհաննեան Արշալոյս, Տէր-Ռուբինեան Գ., Տէր-Ստեփանեան Ա., Տէր-Վարդանեան Ալ. (Պարսկաստան՝ Թաւրիզ), Տէր-Օհանեան Վ., Репортеръ, Robert (Պարսկաստան՝ Թաւրիզ), Փարաջանեան Գ., Փարոս, Քալանթար Լ., Օվի, Ֆաննի Ֆ., Ֆօրստէր և այլք,—խմբագրութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։ Մենք, անշուշտ, չենք մոռանում և մեր գաւառական, գիւղական այն բազմաթիւ մեղուաջան թղթակիցներին, որոնք իրանց տեղեկութիւններով, թղթակցութիւններով գաւառի և գիւղի կեանքի մասին՝ հնարաւորութիւն են տուել գաւառական կեանքը ցոլացնել մեր թերթի մէջ. դրանց ևս յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։ Եւ ամենքին ասում ենք հետևեալը.

Կատարեցէք՝ ինչ որ կարողէք, ինչ որ թելադրում է ձեր խիղճը, ձեր զգացումը։ Թող կատարեն առաւել լաւ, ովքեր կարող են. հաւատարիմ եղէք ձեր բռնած դրօշակին, անյողդողդ մընացէք ձեր համոզումների, գաղափարների մէջ և քաջ իմացէք, որ ապագայ սերունդները, պատմութիւնը գնահատելու են ձեզ։ Մի՛ մոռացէք, որ հունձը շատ է, իսկ մշակները սակաւ։

Վերսկսենք քաշել մեր լուծը, ծանր, բայց քաղցր լուծը վաղվանից, 1916 թ. ևս։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Ուրբաթ, Նոր-Տարվայ երեկոյեան հերթական հանդիսաւոր jour-fixe-ին հրաւիրվում են Սալօնի մշտական այցելուները շնորհ բերել իրանց սեղանային տոմսերով, իսկ ԱՂԲԻՒՐԱՏԱՐԱԶԻ 1916 թ. բաժանորդներն իրանց անդորրագրերով։ Կողմնակի մարդկանց համար գրական-գեղագիտական Սալօնի մուտքը փակ է։
առ. 13. 2—1

Յօգուտ պատերազմից մնասվածների՝ առանձնապէս փախստականների եւ որբերի՝

„ԶԻԹԵՆԻ“

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

փոստակազմ (սահմանափակ քանակութեամբ) արժէ 10 ռ., սովորական կազմով 3 ռ., իսկ անկազմ 2 ռ. 40 կ.։ Ճանապարհածախքը Նպաստամատոյց Ընկերութեան վրա։
10 օրինակից աւելի պատանդողներին կարելի է 10% զեղչ, դրամը վաղօրօք ուղարկելու պայմանով։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія «НПАСТАМАТУЙЦЪ».
առ. 956. 5—4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՑԷՔ

„ԱՂԲԻՒՐԻՆ“ ԵՒ „ՏԱՐԱԶԻՆ“

Դեկտեմբերի № №-ը «ԱՂԲԻՒՐԻ» և «ՏԱՐԱԶԻ» արդէն լոյս են տեսել և նուիրված են Սեդրաք Մանդինեանի յիշատակին։ Նոր-Տարվայ «ԱՂԲԻՒՐԻ» և «ՏԱՐԱԶԻ» №№-ը ուղարկվելու են բացառապէս նրանց, որոնք 1916 թ. համար բաժանորդագրված կը լինեն։ «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱԶԻ» տարեկան բաժանորդագրիչը 10 ռ., արտասահման 40 շիլինգ կամ 50 ֆր.։ Արտասահմանից գրամ ուղարկողները պէտք է վճարեն բանկային չէկով շիլինգ կամ ֆրանկ գրված Պարիզի կամ Լօնդոնի բանկերից ստանալի։
Ապառիկ եւ մաս-մաս վճարող բաժանորդագին չի ընդունվում։
Փակված է դպրոցական աշակերտներին կէս գնով և «ԱՂԲԻՒՐԻ» տարեկան 1 ռ.
բաժանորդագրութիւնը։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮРЪ»-«ТАРАЗЪ», Direction «Agbür» «Taras».
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
առ. 13. 5—4

Թերլիճի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ

Գ.Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՏՈՐԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների ընդունելութիւնը և լուսանկարները լաւագոյնը ԹՆԴՊԵՆՆՈՒՆ ԶԱՆԹԱՑՆ ՀԱՄԱԿՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցերեկ. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ առ. ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—92.
(ա. օ.) 896. 100—22

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլօմբ.—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամները ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. 10—2 առաւ., 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 959. 100—6

ՉԸ գտան ու վտարվեցին նրանք, որոնք կամենում էին պղտոր ջրի մէջ ձուկն որսալ կամ ժողովրդական տառապանքներն իրանց փառասիրութեան պատուանդան շինելու։ Բարեբաղդաբար, այդպիսիների թիւը շատ սահմանափակ եղաւ։

Սակայն «Մշակը» աշխատեց միայն տեսականօրէն չը ծառայել հայ ժողովրդին։ Տեսական, գաղափարական սպասաւորութեան հետ զուգընթաց, «Մշակի» խմբագրութիւնը գործնական միջոցների ևս ձեռնարկեց ծառայելու հայ ժողովրդին, փախստականներին՝ կազմակերպելով ընկերութիւններ, յանձնաժողովներ, հանգանակութիւններ կատարելով, իր խմբագրի և աշխատակիցների ձեռքով ուղևորութիւններ և այցելութիւններ կազմակերպելով, մասնակցելով զանազան ձեռնարկութիւնների, որոնց նպատակն էր փախստականներին օժանդակել։ Միայն յօգուտ փախստականների «Մշակը» կարողացաւ հանգանակել մօտ 83,000 ռուբլի, բացի յօգուտ կամաւորների ստացված գումարից, որ հասաւ մօտ 50,000 ռ. գումարի։ Մենք չենք խօսում այն աջակցութեան և օգնութեան մասին, որ մեր լրագրի խմբագիրը, իբրև նախագահ փախստականական յանձնաժողովի, մատուցանում է փախստականներին, ոչ միայն հայերին, այլ և անխտիր բոլոր ազգութիւններին։

Խօսքի հետ գործ—ահա այն նշանաբանը, որին շարունակ հետևել է «Մշակը» և որից բնաւ չէ շեղվել։

Եւ այդ ամենի մէջ մեզ օգնել են մեր աշխատակիցները, որոնց ամենքին խմբագրութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը և որոնց յորդոր է կարդում շարունակել նոյն անվեհերութեամբ, նոյն անձնուիրութեամբ իրանց սպասաւորութիւնը հայ ժողովրդին՝ սերմանելով բարի, ազնիւ սերմեր և չը մոռանալով, որ իրանք՝ այդ աշխատակիցները և հայութեան զանազան անկիւններում ցրված թղթակիցները կազմում են երկրի աղը։

Մեր այդ աշխատակիցներին, որոնց անունները բարոյական պարտք ենք համարում արձանագրել, այն է՝ Աբէլեան Ալ., Ագեան Մ., Աթանասեան Ա., Աղաջանեան Վ. ք., Աղասարեան բժ. Բ., Ամատեան դօկտ. Գ. (Շվեյցարիա՝ Լօզան), Ամօ-Խարազեան, Անանեան Արմէն, Անանուն Դ., Ապրեսեան Աբէլ, Ապրեսեան Զ. ք., Առաքելեան Ս., Ասլանեան Ա., Ասլանեան Ս. ք., Ատրպետ, Աւգալբէգեան Խ., Բաշինջաղեան Գ., Բեռեռ, Բունիաթեան Ա., Գաղթական, Գասպարեան Մ. (Հնդկաստան՝ Ռանգուն), Գասպարեան Յ., Գնունի Յովհ., Գողթնեցի Մժէժ, Դուլումճեան Տ., Գրիգորեան Յ. ք., Դանիէլ-բէկ Սօֆիա, Դանիէլեան Լ., Դարբինեան Արտակ, Դաւթեան Ա., Դերձակեան Մ., Դերենիկեան Ղ., Եղեկեան Ա., Եղիազարեան պրոֆ. Ս., Զաքարեան Սաթենիկ, Զօրեան Ստ., Էդիլեան Մ. ք., Թարմ-ոյժ, Թովմասեան Տ., Թումանեան Գ. ք., Ժամկոչեան Հ. (Պարսկաստան՝ Նոր-Զուղա), Իրօ, Իշխանեան Բ., Իսկէնդէրեան Ռ. Լալայեան Ե., Լեոնեան Գ., Lucifer, Խաչատրեան բժ. Վ., Խուրշիդ, Խօջամիր Յ., Խօջայեան Յովս., Մատուրեան Ալ., Կալկաս, Կուրղինեան Շուշանիկ, Կրասիլնիկեան Կոստ., Հայկունի Գ., Հորոմեան Ա., Ղազարեան Մ., Ղուլեան Առ., Մալխասեանց Ստ., Մանուէլեան Միք., Մարկոսեան Լ., Մարտունի Ալ., Մելիք-Աղաջ. Ալ., Մելոյեան Գ., Մենաթոր-Միրաժ, Մինասեան պրոֆ. Մ., Միսակ, Միրզեան Գ., Միրզայեան Գր., Միքայէլեան Կարէն, Մխիթարեան Արշալոյս, Մկրտիչեան Լեւոն (Եգիպտոս՝ Ալէքսանդրիա), Մկրտումեան Բ., Մուրադեան Ա. Յ., Մուրադեան Գէորգ, Մտրակ, Յակոբջանեան Յ. (Հնդկաստան՝ Սուրաբայա), Յարութիւնեան Ե., Յովհան Ս. (Պարսկաստան՝ Ղազվին), Նազարեան Ս., Նազարեան Տ., Նազարէթեան Ա., Նաւասարդեան բժշկապ. Բ., N. N., Շահազիզեան Լ. (Ռումինիա՝ Բուխարեստ), Շիրվանզադէ, Շեխեան բժ. Ա., Շովրեան Մ., Ոսկերչեան Ս., Զմշկեան Մ., Զօպանեան Ա. (Ֆրանսիա՝ Պարիզ), Պահարէ, Պայազատ Աբգար, Պապիկեան Վ., Պետ, Պետրոսեան Յ., Պէյլիֆի Մելիք, Պէրպէրեան Մ. Գ. (Ամերիկա՝ Ուստր), Պոլարիս (Հնդկաստան՝ Կալկաթա), Սազանդարեան, Սալ-Ման, Սարաճեան Խ., Սարգսեան Լ., Սարուխան Ա., Սիմէոնեան Ա. ք., Սինանեան Գ., Սուրխաթեան, Սպէնդիար Յ., Սօլովեան Յ., Սօյզադէ, Վ. (Պարսկաստան՝ Բաշտ), Վանեցի, Վարդանեան Գր., Վարդանեան Ե., Տարախչեան Մ., Տէր-Աւագեան Օլգա, Տէրեան Վահան, Տէր-Մելքիսեդեկեան Ս., Տէր-Մինասեան Եր., Տէր-Յովհաննիսեան Պետ. ք., Տէր-Յովհաննիսեան Ս. ք., Տէր-Յովհաննեան Արշալոյս, Տէր-Ռուբինեան Գ., Տէր-Ստեփանեան Ա., Տէր-Վարդանեան Ալ. (Պարսկաստան՝ Թաւրիզ), Տէր-Օհանեան Վ., Репортеръ, Robert (Պարսկաստան՝ Թաւրիզ), Փարաջանեան Գ., Փարոս, Քալանթար Լ., Օվի, Ֆաննի Ֆ., Ֆօրստէր և այլք,—խմբագրութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։ Մենք, անշուշտ, չենք մոռանում և մեր գաւառական, գիւղական այն բազմաթիւ մեղուաջան թղթակիցներին, որոնք իրանց տեղեկութիւններով, թղթակցութիւններով գաւառի և գիւղի կեանքի մասին՝ հնարաւորութիւն են տուել գաւառական կեանքը ցոլացնել մեր թերթի մէջ. դրանց ևս յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։ Եւ ամենքին ասում ենք հետևեալը.

Կատարեցէք՝ ինչ որ կարողէք, ինչ որ թելադրում է ձեր խիղճը, ձեր զգացումը։ Թող կատարեն առաւել լաւ, ովքեր կարող են. հաւատարիմ եղէք ձեր բռնած դրօշակին, անյողդողդ մընացէք ձեր համոզումների, գաղափարների մէջ և քաջ իմացէք, որ ապագայ սերունդները, պատմութիւնը գնահատելու են ձեզ։ Մի՛ մոռացէք, որ հունձը շատ է, իսկ մշակները սակաւ։

Վերսկսենք քաշել մեր լուծը, ծանր, բայց քաղցր լուծը վաղվանից, 1916 թ. ևս։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հետ. Դորձ.)

29 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Դերազոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատ։ Ծովամերձ շրջանում թիւրքերը նորից փորձ արին անցնել Արխավէ գետի աջ ափը լոյս դեկտ. 27-ի գիշերը, բայց մեր կրակը թոյլ չը տուեց։ Դեկտ. 28-ի արևածագին մեր զօրամասերը ներս խուժեցին Թէվ գիւղը (Թօրթում լճից դէպի հարաւ-արևելք, և ոչնչացրին նրա հիւսիս-արևելեան վերջաւորութեան։ Թօրթում լճից դէպի հարաւ-արևելք մեր հետախոյզները պրապօրշչիկներ Սօկոլովի և Մելիք-Յովսէփեանի հրամանատարութեամբ լոյս դեկտ. 27-ի գիշերը յարձակվեցին Արդօս գիւղի շրջանում գտնվող թիւրքական մի զօրամասի վրա և նետելով նրա վրա ձեռքի ռումբեր, գրոհ տուին սուիններով. թշնամին, որ ապարդիւն տեղը փորձում էր շրջապատել հետախոյզներին, ցիրուցան եղաւ և ունեցաւ շատ սպանվածներ. մեր հետախոյզները, ձեռք ձգելով գերիներ, վերադարձան առանց կորուստների։

Պարսկաստանում, Ուրմիայի լճի հարաւ-արևմտեան ափին հայկական նոր-բակազմ զօրախմբերից մինը աջող հետախուզում կատարեց Սամրութ գիւղից դէպի հարաւ։

ԼՕՆԴՕՆ.—Զեմբերլէնը համայնքների պալատում յայտնեց, որ անգլիական մի զօրաբաժին զեներալ Էլմերի հրամանատարութեամբ, որ գնում էր օգնութեան դէպի Կուտէլամար, ունեցել է յամառ կռիւ Տիգրիսի երկու ափում թիւրքական երեք դիվիզիաների հետ։ Այդ գետի աջ ափում անգլիացիք դեկտ. 25-ին վերցրել են թշնամու դիրքերը, ձեռք են ձգել 2 թնդանօթ ու 700 գերի։ Գեներալ Էլմերը տեղեկացնում է դեկտ. 27-ից, որ թշնամին

ԱՌԱՋԻՆ ԱՆԳամ ՀԱՅ ՇԱՀ ԳՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԴՈԿՈՅՎՈՐԴՈՅ

Ինչպէս տեսանք 26-ի դիմումը, Ազգային Սահմանադրական ժողովի ընդունուած հոդուածներուն մէջ Հայ Հեղափոխական Դաշնակցութիւնը ամբողջապէս մերժուեցաւ։ Ինչպէս նաեւ Ազգային Ժողովի նիստերուն մասնակցութիւնը, Դաշնակցութեան ներկայացուցիչներուն ամբողջապէս մերժուեցաւ։

ՍԱԼՕՆԻԿԻ ՀԻՒՊԱՏՈՍՆԵՐԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

—

Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի, Բոլգարիայի և Թիւրքիայի հիւպատոսների ձերբակալումը տեղի է ունեցել այն կասկածով, թէ հիւպատոսարանների պաշտօնեաները սերտ կապ ունեն Մակեդոնիայի գերմանօ-թիւրքական լրտեսութեան կազմակերպութեան հետ։

Դաշնակից իշխանութիւնների կարգադրութեամբ կատարված խուզարկութիւններից պարզվեց գօկ

՝ մենտներով, որ իսկապէս այդ պաշտօնեաներից շատերը մասնակից են լրտեսութեան կազմակերպութեանը։

Խուզարկութիւնների հետեւանքով Սալօնիկում տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալումներ դաշնակիցներին թշնամի երկիրների հպատակների շրջանում։

Թիւրքերը, բոլգարները, գերմանացիք և աւստրիացիք պէտք է արտաքսվեն Յունական Մակեդոնիայի սահմաններից դուրս, որը ժամանակաւորապէս գրաւել են դաշնակիցների զօրքերը։

Յունաստանի բողոքը յիշված հիւպատոսների ձերբակալման դէմ, դաշնակիցները լաւ էութեան քննելու են՝ սկսած հետազօտութիւնը աւարտելուց յետոյ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Յօդուած Վիլեամսի)

—

Քաղաքակիրթ աշխարհը սոսկաց՝ լսելով հայկական նոր Ջարդերի մասին, որ կատարվեց աւելի սառնարիւն կերպով, աւելի լաւ կազմակերպված ու աւելի մեծ չափերով, քան նախորդ Ջարդերը՝ սկսած Լէնկ-Թիմուրի օրերից։

Փաստերն ստուգված են փախստականների վկայութեամբ, որոնք իրանք են եղել ականատեսները, կամ ականատեսները, Թիւրքիայից արտաքսված կամ փախած օտարահպատակների տեղեկութիւններով, Տրապիզոնի իտալական հիւպատոսի մանրամասն ու սոսկալի զեկուցագրով և նոյնպիսի գերմանական մխիթարներների և գթութեան քոյրերի բողոքով։

Ջարդը կատարվում է խիստ սիստեմով, և նրանում, արդարացի թէ անարդար, մեղադրում են գերմանական հիւպատոսներին։ Բոլոր այն վայրերում, որ հայեր են ապրում, Կ. Պոլսից հրաման է ստացվում աքսորելու նրանց դէպի անապատներ կամ անառողջ վայրերը։ Զինուորացու հայերի մեծամասնութիւնը այսօր կը հալածուի և կը հարուածուի «լաւագոյն աշակերտն ըլլալուն համար այն քաղաքակրթութեան, զոր ամերիկեան դասախօսարանները, Ֆրանսացի ուսուցիչներուն հետ, տարածեցին անոր մէջտեղ։ Արդարև, ինչ որ կը հալածուի, կանարգուի, կը կոխոտուի հայուն մէջ, ինչ որ իր յատկանիշներն է, ամբողջութիւնը գիտակից, հեռու ու նախանձակէզ բարբարոսին կողմէ կը հալածուի, արևմտեան կուլտուրայի վեհ, մաքուր, ազատ ու ազնիւ ոգին է, և այդ է որ հայկական մարտիրոսութեան կուսակցի գերագոյն վեհութիւն մը։

Պիտի յայտնի Ամերիկա՝ վերջ դնել այս ոճրագործական մոլեգնութեան։ Ամերիկեան կառավարութեան մինչև ցարդ կատարած Ջանքերը ուէ արդիւնք ունեցա՞ն։ Այդ Ջանքերը եղա՞ն այնքան կորովի, որքան պէտք էր և կարելի էր։ Այստեղ ոչինչ գիտենք որոշ այս մասին։ Լրագիրներէ և այլ աղբիւրներէ մեր ունեցած տեղեկութիւնները հակասական են և չափազանց կարճառօտ։ Լրագիրները խօսեցան նաև պապին միջամտութեան մասին և հաղորդեցին, թէ այդ միջամտութիւնը բարերար արդիւնք ունեցած է։ Ճիշդ է արդեօք ասիկա։ և ինչ չափով բարեփոխուած է կացութիւնը։ Մենք վաղուց փափագելի նկատած ենք որ բոլոր Չէզոք ազգերը միասին հաւաքական դիմում մը ընէին Թիւրք, գերման և աւստրիական կառավարութեանց։ այս փափագը յայտնողներ եղած են որու որ անկ է «Կոչնակը» իր վերջին թիւերուն մէկուն մէջ կը գրէր, թէ բոլոր Չէզոք ազգերը դիմում ըրած են։ Ստոյգ է արդեօք, և եթէ ստոյգ է, ինչ հրաման է այդ դիմումին արդիւնքը։ Ի՞նչ է

Ջրախեղդ անում։ Դէպքեր են եղել, որ կանայք ծծկեր մանուկները գրկած՝ Եփրատն են նետվել, մարդկային գազանութիւնից ազատվելու համար։

Անկարելի է պարզել ոչ կոտորվածների, ոչ աքսորվածների և ոչ մահմեդականացած հայերի ստոյգ թիւը։

Ենթադրում են, որ Թիւրքիայում 1,500.000-ից մինչև 2.000.000 հայեր էին ապրում։

Դրանցից 200,000-ը Պօլսում էին ապրում, և նրանք համեմատաբար աւելի քիչ են տուժում։

Մի հաշուով՝ իրանց բոյներից արտաքսվում են 800,000, որոնցից հազիւ $^1/_3$-ը տեղ են հասնում։ Սակայն Ֆրանսիական պաշտօնական հաղորդագրութիւնն ասում է, որ 800,000 հայ են կոտորվել։

Շատ քչերին աջողվում է զէնք վերցնել և սարը բարձրանալ և նրանք հաւանօրէն դեռ կուռում են լեռներում։

Իւրաքանչիւր օրը մեզ մօտեցնում է այն մօմէնտին, երբ Թիւրքիայում խպառ կը ջնջվի հայ տարրը։

Եւրոպան շատ է պարտական հայերին, որոնք իրանց կրծքով դէմ էին կանգնած ասիական հորդաներին։

Այժմ նրանք միջնորդներ են արևմտեան քաղաքակրթութեան և արևելեան ժողովուրդների միջև։ Անա թէ ինչու կարևոր է այդպիսի ժողովուրդը փրկել կորուստից։

Սոսկալի է, որ Գերմանիան, եթէ նոյնիսկ ինքը չէր այդ կոտորածները տարբողը և նրանց մասնակիցը, գոնէ սառնարիւն մնաց և չը բռնեց Թիւրքերի ձեռքը։

35 տարի առաջ Ռուսաստանը Թիւրքա-Հայաստանի մեծ մասը գրաւեց և Սան-Ստեֆանոյի դաշնագրով իրաւունք ստացաւ պահելու այդ երկիրները մինչև բարենորոգում մտցնելը։ Անգլիան խափանեց այդ ջանքերը։

հրապարակ եկաւ Գերմանիան (1895 թւի մեծ կոտորածներից յետոյ) խանգարելու Անգլիային և Ռուսաստանին՝ հայկական բարենորոգումների խնդրում։ Բանակցութիւնները ձգձգվեցին մինչև ներկայ պատերազմը և ոչ մի արդիւնքի չը յանգեցին։

Պէտք է զարմանալ հայերի ինտելիգենտութեան և կրթութեան վրա, հայերի, որ ապրում են բարբարոսների շրջանում։ Զարմանալի բացառութեամբ, հայերը միշտ եղել են օրինապահ և, գուցէ, անգամ չափազանց խոնարհ ժողովուրդ։ Սակայն վերջին տարիները նրանք սկսեցին պահանջել բարենորոգումներ, որին Թիւրքերը պատասխանեցին կոտորածով։ Հայերի խոշոր կոտորածներ եղել են 1895—8 թ. թ., երբ կոտորածվեցին 100,000, գուցէ և աւելի, հայեր։ 1908 թւին երիտասարդ-Թիւրքերը, տիրանալով իշխանութեան, կազմակերպեցին 30 հազար հայերի կոտորածը։ Ներկայ, նոր սոսկալի կոտորածը առաջացել է, ըստ երևոյթին, այն երկիւղից, որ հայերը կարող են միանալ ռուսներին կամ դաշնակիցներին, վերջիններս Թիւրքիայի սահմանները մտնելու դէպքում։

Անա ինչ է Թիւրքահայերի ճակատագիրը։ բայց պէտք է յիշել, որ հայերը միայն Թիւրքիայում չեն։ Ռուսաստանը և Պարսկաստանը տիրապետում են նախկին հայկական պետութեան հողերի մասերը, որոնց վրա մինչև պատերազմը ապրում էր 2 միլ հայ, որից $^9/_{16}$ ապրում է Ռուսաստանի սահմաններում, ասենք՝ վերջին տասնամեակում, երբ ռուսական իշխանութիւնները աղատամիտ քաղաքականութիւն էին վարում հայերի վերաբերմամբ, վերջիններս դրութիւնը լաւ էր։ Նրանք Ռուսաստանին տուել են աչքի ընկնող զօրավարներ, դրանց թւում Լօրիս-Մելիքովին և Տէր-Ղուկասովին։ Ռուսաց բանակում ապրում է 100,000 հայ, ռուսաց դրօշակների տակ կռուում են մի քանի հազար հայ կամաւորներ։ Պարսկաստանում ապրող 200,000 հայերը հանդիսանում են պարսկական ազգաբնակութեան ծաղիկը։

Շատ դարերի ընթացքում հայերը, հրէաների նման, եղել են մի ժողովուրդ, սեփական երկիր չունեցող և իրանց հողի վրա ապրող, որը բաժանված է զանազան պետութիւնների միջև։ Թիւրքաց-Հայաստանում ընդարձակ տարածութեան վրա ապրում էր հայերի կէսից աւելին, չը նայած կոտորածներին, չը նայած և նրան, որ նրանցից շատերը գաղթում էին, որպէսզի աղատվեն կենցաղական անհնար պայմաններից։ Հայերի բարենորոգման պահանջները վախեցրին Թիւրքերին, որ հայերը կը հետևեն Ռումինային, Սերբիային, Բոլգարիային, Արևելեան-Ռումելիային և Մակեդոնիային և այդ պատճառով Թիւրքերը հայերին պատասխանեցին կոտորածներով։ Թիւրքական քաղաքականութիւնը կամենում էր բնաջինջ անել հայերին, և արդիսով վերջ տալ հայկան հարցին։

Հայերի գոյութիւնը Թիւրքիայի սահմաններից դուրս դրական է, որ նրանց ցեղը կը շարունակվի։ Բայց Թիւրքահայերի մասը

տարբեր եղանակներ։ Դեռ չենք գիտենք մինչև քանի որոշ Գիտենք միայն—և դժբաղդաբար տիկա անտարակուսելի է—թէ մարդկային պատմութեան մէջ նմանը չը տեսնուած փոթորիկ մըն է որ անցաւ Թիւրքիոյ մեր եղբայրներուն վրայէն, և թէ կորուստը՝ զոր մեր ցեղը կրեց այնտեղ՝ սահգին է, տարապայման։ և ինչ որ մեր անձկութիւնը կը կրկնապատկէ, մեր որոշ չգիտնալն է, թէ ինչ է կացութիւնը այս րոպէիս և թէ ինչ պիտի ըլլայ ան մինչև պատերազմին վերջը։

Ինչ որ ամերիկեան ազգէն, ինչպէս բոլոր չէզոք ազգերէն, մենք կը խնդրենք, սա է, որ անոնք իրենց բոլոր ազդեցութիւնն ի գործ դնեն, իրենց բոլոր Ջանքերը թափեն՝ հասկցնելու համար Թիւրքը, գերման և աւստրիական կառավարութեանց, թէ Թիւրքիոյ հայոց վերագրուած ապստամբական ծրագիրները անհիմ են։ Ռուսիոյ հայերը, արտասահմանի գաղութներու հայերը Ռուսիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ կողմը բռնեցին՝ թէ հայութեան պաշտպան այդ երեք ազգերուն իրենց երախտագիտութիւնը ցոյց տալու և թէ ազգային ու ազատագրական իդէալի մը հաւատարիմ մնալու համար։ Թիւրքիոյ հայերը արդար չէ պատասխանատու բռնել դրսի հայոց ընթացքին համար։ անոնք ոչ մէկ յարաբերութիւն ունեցան դրսի հայոց հետ։ ամենաստուար մեծամասնութեամբ անոնք բացարձակապէս քօրբէթի ընթացք մը ունեցան օսմ. պետութեան հանդէպ։ Թիւրքն է որ, անոնց վերագրելով երևակայական ծրագիրներ, սկսաւ հալածել զանոնք, խոշտանգել, անարգել, հարիւրներով ձերբակալել նոյնիսկ Ջարդել։ այդ հալածանքներուն և վայրագութեանց դիմադրելու համար՝ անոնց մէկ մասը՝ քանի մը տեղ՝ ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առաւ.

ստուար մեծամասնութիւնը նոյն իսկ հալածանքներուն և խժդժութեանց հանդէպ մնաց խաղաղ։ Իսկ այժմ, երբ Թիւրքիոյ հայութիւնը ճղակոտոր եղած է, թուով մեծապէս նուազած, մնացածն ալ՝ տարտղնուած, կողոպտուած, խեղճ ու ողորմելի վիճակի մը վերածուած, շարունակել հալածանքը՝ կը նշանակէ վճռականապէս ապացուցանել, թէ Թիւրքին միտքը ուրիշ բան չէ, բայց եթէ պատեհ բռնկէն օգտուելով բնաջինջ ընել պետութեան հայ տարրը, ոչ թէ ապստամբ, այլ հայ ըլլալու յանցանքին համար։

Այս պատերազմ վերջ պիտի ունենայ սակայն։ Մարդկային ընտանիքին մէկ անդամը—Թիւրքահայ համայնքը—Ջնջելու ճիւաղային և անխմաստ ոճիրը գործելէ յետոյ, ինչ երեսով Թիւրքը, ինչ որ ըլլայ վաղուան իր կացութիւնը, պիտի կարենայ յարաբերութիւններ ունենալ քաղաքակիրթ ազգերու հետ։ Եւ այն Գերմանիան, այն Աւստրիան, որոնց Հիւրշմանները, Լեհման Հաուփթները, Մուրքուարթները, Գելցերները, Ֆինկերը, Ֆրիդրիխ Միւլլերները, ընդ-Չիկօվսքիները, Լեփսիուսները հայ ցեղին պատմական ու քաղաքակրթական դերին, լեզուին, գրականութեան, արուեստին մասին այնքան ներբողելից ուսումնասիրութիւններ հրատարակած էին, ինչ պիտի ըսեն մարդկութեան, ինչպէս պիտի արդարանան պատմութեան առջև, երբ իրենց մեղսակցութեամբ այդ հրէշային եղեռնը լիովին գործուած ըլլայ։

Անա ինչ որ Ամերիկա և միւս չէզոք ազգերը ունին ըսելու Թիւրք, գերման և աւստրիական կառավարութեանց։

Մնդիրը քաղաքական չէ այլուս. զուտ մարդկային հարց մըն է, կարելի է մինչև իսկ ըսել՝ գիտական հարց մը։

Թիւրքահայ համայնքը թէ մարդկութեան, թէ նոյնիսկ Թիւրքիոյ ահագին ծառայութիւններ մատուցած է. անիկա մէկ թանկագին ծաղիկն է մարդկային բուրաստանին՝ կարծիքովն իսկ գերման ու աւստրիական մեծ գիտուններու, կարծիք զոր նոյն

ցորդները յոյս են ներշնչում վերածնութեան։ Դժուար է որոշել, թէ նրանցից որքան հոգի ևս թաղվում են ամեն տեսակ անկիւններում, քաղաքներում և անգամ Թիւրքիայի ամենակուլտուրական քաղաքներում։ Բայց $^1/_4$ միլիոն, իսկ իմ հաշիւներով աւելի, փախել է Կովկաս, շատ հազարներ Պարսկաստան, մի քանի հազար Եգիպտոս։ Բացի այն 200,000-ից, որ ապրում է Կ. Պոլսում, 140-ին Թիւրք կառավարութիւնը «թոյլատրել է» մեկնել Բոլգարիա։ Վերջապէս 150—2000 հայեր ապրում են ասիական նահանգներում, որ այժմ գրաւված է Ռուսաստանի կողմից։ Նրանք ամենքն էլ կարիք են զգում անմիջական օգնութեան։ Կովկաս փախածները տեղ են հասել սաստիկ հիւծված, թոյլ և կարիքաւոր դրութեան մէջ։ Մի քաղաքում, ուր կենտրոնացած են եղել շատ հայեր, մի ժամանակ մեռնում էին օրական 300 մարդ։ Ռուսահայերը անխտիր օգնում են ինչպէս իրանց հարազատներին, նոյնպէս և Թիւրքիայից եկած ուրիշ փախստականներին։ Միացեալ Պետութիւնները շատ բան են աբել հայերի աղէտալի դրութիւնը թեթևացնելու։ Անգլիայում գոյութիւն ունեն հայասպասա մի քանի ընկերութիւններ, և նրանք մօտ ժամանակներս կազմակերպել են հայկական ֆօնդ։ Նուէրները թափվեցին առատաձեռն, և արդէն մի քանի օրից յետոյ ֆօնդի վարչութիւնը կարողացաւ Մոսկվայի անգլիական հիւպատոսին փոխադրել 50,000 ֆունտ ստերլինգ, Կովկասի փախստականների համար։ Մանչեստրը նշանաւոր լուսայ մատրեց և յոյս կայ որ միւս խոշոր քաղաքներն էլ, նաև ինչպէս Անգլիան, արձագանք կը տան։ Անցեալն ի նկատի ունենալով, Անգլիան պարտաւոր է օգնել հայերին, ուժեղ մասնակցութիւն ցոյց տալով հայերին կործանումից փրկելու գործում»։

(«Contamporary Review»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

—

Ստացանք Եղ. Յ. և Վ. Զիլինկարեաններից իրանց թանգագին բարեկամի՝ հանգուցեալ Ս. Մ. Նունուփարեանի յիշատակին՝ պասկի փոխարէն՝ 15 բուբլի, յանձնելու Նպաստամատոյց Ընկերութեանը։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՆԴԱՒԹԻՒՆԸ

—

Բագրատ եպիսկոպոսի հեռագիրը հաղորդեց Վեհ. Կաթողիկոսի հիւանդութեան մասին։ Թիֆլիսում պաշտօնական շրջաններում տեղեկութիւններ են ստացվել, որ Վեհի հիւանդութիւնը բաւական ծանր կերպարանք ունի։ տաքութիւնը հասնում է մինչև 40° ի։

Մաղթում ենք Վեհին շուտափոյթ առողջութիւն, իր հօտի բարօրութեան համար, որովհետև տառապալի և աղէտալից օրերում Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկարատև կամ ծանր հիւանդութիւնը խորապէս կարող է ազդել ազգային եկեղեցական գործերի ընթացքի վրա։

իսկ սկսած են շարժել գործել, Ջանքեր ընել Թեւեւ արդար պիտի ըլլար կոչին մէջ յիշատակել այդ Ջանքերը և հրաւիրել ամերիկեան ազգը անոնց տալ աւելի ուժգին ու կորովի ձև մը։ Թէպէտ և այդ յիշատակումը պակսի հոն, ամերիկեան ազգը անշուշտ պիտի զգածուի կարդալով կոչին այն յուզիչ տողերը, ուր կըսուի թէ Թիւրքիոյ հայութիւնը այսօր կը հալածուի և կը հարուածուի «լաւագոյն աշակերտն ըլլալուն համար այն քաղաքակրթութեան, զոր ամերիկեան դասախօսարանները, Ֆրանսացի ուսուցիչներուն հետ, տարածեցին անոր մէջտեղ։ Արդարև, ինչ որ կը հալածուի, կանարգուի, կը կոխոտուի հայուն մէջ, ինչ որ իր յատկանիշներն է, ամբողջութիւնը գիտակից, հեռու ու նախանձակէզ բարբարոսին կողմէ կը հալածուի, արևմտեան կուլտուրայի վեհ, մաքուր, ազատ ու ազնիւ ոգին է, և այդ է որ հայկական մարտիրոսութեան կուսակցի գերագոյն վեհութիւն մը։

Պիտի յայտնի Ամերիկա՝ վերջ դնել այս ոճրագործական մոլեգնութեան։ Ամերիկեան կառավարութեան մինչև ցարդ կատարած Ջանքերը ուէ արդիւնք ունեցա՞ն։ Այդ Ջանքերը եղա՞ն այնքան կորովի, որքան պէտք էր և կարելի էր։ Այստեղ ոչինչ գիտենք որոշ այս մասին։ Լրագիրներէ և այլ աղբիւրներէ մեր ունեցած տեղեկութիւնները հակասական են և չափազանց կարճառօտ։ Լրագիրները խօսեցան նաև պապին միջամտութեան մասին և հաղորդեցին, թէ այդ միջամտութիւնը բարերար արդիւնք ունեցած է։ Ճիշդ է արդեօք ասիկա։ և ինչ չափով բարեփոխուած է կացութիւնը։ Մենք վաղուց փափագելի նկատած ենք որ բոլոր Չէզոք ազգերը միասին հաւաքական դիմում մը ընէին Թիւրք, գերման և աւստրիական կառավարութեանց։ այս փափագը յայտնողներ եղած են որու որ անկ է «Կոչնակը» իր վերջին թիւերուն մէկուն մէջ կը գրէր, թէ բոլոր Չէզոք ազգերը դիմում ըրած են։ Ստոյգ է արդեօք, և եթէ ստոյգ է, ինչ հրաման է այդ դիմումին արդիւնքը։ Ի՞նչ է

ինչպէս Թիւրքիոյ մէջ ողջ մնացած հայոց վիճակը այս պահուս։ Ի՞նչքան է մահացածներուն ճիշդութիւնը, որքանը իրենց տեղը մնացած են, որքանը մահմեդականացած, որքանը քշուած։ քշուածները ուր են, ինչ վիճակի մէջ են։ այս ամենուն մասին քիչ բան գիտենք մենք։

Մենք կարիք ունինք գիտնալու թէ ինչպէս կարելի է Թիւրքիոյ հայերուն հետ հաղորդակցութիւն մը ունենալ։ Ինչպէս կարելի է անոնց հետ նամակներ փոխանակել։ Ինչպէս կարելի է անոնց հետ գրաւոր յարաբերութիւն ունենալ

Մեծ Իշխան Փոխարքան դեկտ. 28-ին ընդունեց ասորոց պատրիարք Մար Շիմոն Բենիամինին։ («Кав.»)

Երկուշաբթի, դեկտ. 28-ին նորին ե-րանելութիւն ասորոց պատրիարք Մար Շիմոն Բենիամինը մեկնեց Դիլիգին, ուղեկցութեամբ ասորիներեպիսկոպոսների և իր անձնական քարտուղարի։

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ Թաւրիզում վախճանվել է յանկարծական մահով բժշկապետ Ալանեանը։ Նա թողել է կտակ, որով 5000 թուման է յատկացրել բարեգործական նպատակների համար։

Նկարիչներ Գր. Շարաբեան, Եղիշէ Թադէոսեան, Գարեգին Լևոնեան և ճարտարապետ Դ. Զիսլինով դիմել են Նահանգապետին, խնդրելով թոյլատրել Թիֆլիսում հիմնելու «Հայ նկարիչների միութիւն», որի նպատակն է գեղարուեստական կրթութիւն տարածել հայ ժողովրդի մէջ։

Բաղ. վարչութիւնը մանաւոր բանակցութեան մէջ է մտել անօնիմ ընկ. հետ այն մասին, որ շահագործի Նախալովկայի գիծը։ անօնիմ ընկ. պարտաւորվել է քաղաքին վճարել 1500 ռուբլի ամեն ամիս Նախալովկայի գիծը պահելու համար։

Վերջին երկու օրը քաղաքում բծաւոր տիֆով հիւանդանալու դէպքեր չեն լինում։

Կիրակի օրը, յունվարի 3-ին, ժողովրդական համալսարանի ընկ. նախաձեռնութեամբ, ժողովրդական Տանը, Հայկ Ազատեան կարդալու է մի դասախօսութիւն ռուսերէն լեզուով, «Ժամանակակից թանգութիւնը» թեմայով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Տրաւիատա» օպերայի ներկայացումը դեկտ. 29-ին նոյնպէս անցաւ լի բազմութեան ներկայութեամբ։

Ներկայացման հետաքրքրութիւնը նրանումն էր կայանում, որ բացի տ. Ստաբօտինայից (Վիոլետա) այդ երեկոյ մասնակցում էին ախորժալուր տենոր Զալիպսկին (Ալֆրեդ) և տաղանդաւոր բարիտոն Պոլիտէվը (Ժերմոն)։

Վաղը երեկոյեան կը տրվի «Տախը»։

Յունվարի 8-ին նշանակված է Պոլիտէվի բենէֆիսը։ Այժմեանից իսկ տոմսակները գնվում են յափշտակութեամբ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 23 դեկտեմբերի

Իմ կազմած «Վասպուրականի հայերէն ձեռագիրների ցուցակի» առաջաբանում ես ասել էի, թէ առանձնապէս ուշագրաւ է Աղթամարի կաթողիկոսութեան պատմութեան, Երզրում քաղաքի և այլ անտիպ ձեռագիրներ, որ ամբողջովին տպվելու են ցուցակիս պատմական բաժնում։ Հետևապէս պարզ էր, որ ես 1910 թ. առաջինը Աղթամարի վանքում արտագրել եմ Աղթամարի կաթողիկոսութեան պատմութեան մինչև այդ ժամանակ անյայտ մնացած ձեռագիրը և հրատարակելու եմ, երբ հերթը իմ ձեռագրի ցուցակի այդ մասին հասնի։ սակայն հ. Մեսրոպ վ. Մաքսուտեանը, տեղեակ թէ անտեղեակ իմ այդ գրութեան, Էջմիածնի մատենադարանում սկսում է արտագրել այդ ձեռագիրը, որ Վասպուրականի այլ ձեռագիրների հետ վերջին նահանջի ժամանակ բերված Էջմիածին։ Ես իմանալով այդ՝ անմիջապէս նամակով իմացնում եմ հայր սուրբին, որ այդ աշխատանքն արդէն կատարված է և որպէս առաջինը յայտագործի՝ ինձ է պատկանում նրա ընտրի առաջին տպագրութեան իրաւունքը։ սակայն նա՝ ոչ միայն չէ ուզում յարգել գրական էտիկայի իմ այդ պահանջը, այլ և սպառնում է ինձ մի խիստ քննադատութիւն գրել իմ կազմած ձեռագիրների ցուցակի մասին, և գրում էլ է, թէպէտ, չը գիտեմ, թէ որ խմբագրութիւնը տեղ պիտի տայ մի մի խրթին կրքից բղխած մի այդպիսի քննադատութեան։

Ուստի և սրանով ես ուզում եմ յայտնել, որ գրական էտիկայի տեսակէտից դատապարտելի եմ համարում հ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանի վարմունքը՝ և ես էլ հրատարակելու եմ այդ ընտիրը իբրև երկրորդ՝ աղբիւրների մաս իմ պատրաստած Աղթամարի կաթողիկոսութեան պատմութեան բաղմաթիւ կօնդակների և ժամանակագրութիւնների հետ միասին, համարելով այդ ձեռագիրը առաջինը լոյս ածող։

Ե. Լալայեան

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Դշլաղ, 26 դեկտեմբերի

Գիւղիս ծխական դպրոցի հոգաբարձական խորհուրդը ստանալով համադրացի Յովհաննէս Համբարեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր և Աստուածատուր Մայիլեանից իր հանգուցեալ կնոջ՝ 10-ական ռուբլի ու Դաւիթ Միքայէլեանից իր վաղաթառամ դուստր՝ դպրոցիս V բաժ. աշակերտուհի Անահիտի՝ 5 ռուբլի նուիրագրամ, յայտնում է վերոյիշեալ պարոններին իր շնորհակալութիւնը։

Նախագահ՝ Արզար Տէր-Մկրտչեան
Անդամ-քարտուղար՝ Մ. Ղազարեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Ղարամարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուլիա, Զօրանոցի արձանի հանդէպ)
Ամեն օր. բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ ստ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒՍՈՐԴՅԱՆ—11—12½ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԼԱՅՈՐԴՅԱՆ—9½,—2 ժ. ներքին, ղեղային և երեխայոց հիւանդութ. և ծանկահատ.։
Մ. Մ. ԲՆՅԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ս. Գ. ԿԱՐՊԵՏՅԱՆ—12—1 ժ. երնչ., հինգշ. և շաբաթ. երեկոյոց ներքին և հիւ. և ծանկահատ.։
ԵՐԵԳՈՆՆԵՐԸ
Մ. Մ. ԲՆՅԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐ

КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М·ДЕЛАМУРЕ
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М·ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3, ВЕРХНІЙ ЭТАЖЪ
760. 50—19

При ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рецп. пр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
174. 0—80 (5·4.)

ԲԺՇԿ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ՝ սրսկումներ, մասաժ ձեռքով և էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սուբ եւ բրօնիական տրիպէրի, փոքուկ ու կոշտ շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն գեղերով բուսական-սառ գ-ջուական խորհուրդներ։ Սէրը օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մանագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն)։ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և ըստ պտներ 3 ռուբլի վճարով։ Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ։ Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру
А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վենեռական ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու բէնէպտներով, գ. 1 ռուբ. 2) «Գոնոռէաի բժշկարան», անոր հետ ամեն մի բնտանիքի, գ. 50 կ., 3) «Ծիծաղի տկնոր» անեկդոտներ՝ գ. 20 կ., 4) «Վենիկարմաթի տավարը», ծիծաղաշարժ վոդեվիլ, գ. 20 կ., 5) «Մաճաճի», գ. 10 կ., և ճանապարհի ծախս 20 կ պէկ։
(հ. կ.) 311. 100—68

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հակողութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տելէֆոն № 9—76.)
Խմբագիրների ընդունելութիւնը յունվարի 1-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Ծրագիրները ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատունից։
(ա. օ.) 955. 25—5

Առեւտրական դպրոց իրաւունքներով եւ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀ. ՋԱՌ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ
Ընդունելութ. դեկտ. 29-ից, պարապմունքները՝ յունվարի 11-ից։ Նոյն տեղը վաճառվում են քառ. սաժ. 20 կօպէկով այգու համար ոռոգելի հողամասեր, որ գտնվում են Սագարէջօ կայարանից 5 վ., իսկ Տօխլեանուրակի պլատֆորմայից (Կախէթեան երկ.) 2 վ. հեռ. վրա։
961 I Тумановская ул., с. д. № 13. 10—2

ԲԱՑՎԱԾ Է ԿՈՎԿ. Հ. ԲԱՐԵԴ. ԸՆԿ. ԿԻՑ
„ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԻՒՐՕ"
Գաղթականներուն գործ հայթայթելու համար
Կը հրաւիրենք բոլոր աշխատանքի ընդունակ գաղթականները (այր թէ կին) գալ, արձանագրուելու, որպէս զի այդ նպատակով կազմուած յանձնախումբը իր մատնակի դիտումներով աշխատի գործ հայթայթել իրենց։
Գրասենեակը բաց է առաւ. ժամը 10—3-ը և երեկ. 7—8-ը։
Բիւրոյի հասցէն՝ Երեւանեան հրապարակին կից, Պուշկինսկի պասաժ № 20. (Пушкинскій пассажъ № 20).
(օ. մ.) 919. 10—8

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՄԱԹԵԱՆ ՆԵՐՔՈՇ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թուից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Դասընթացը 4-ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։
Խմբերների ընդունելութիւնը դեկտեմբերի 15-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից 1916 թ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատունը՝ Թիֆլիս, Նիկոլայևսկայա փողոց, № 22, տելէֆոն № 7—44.
(ա.հ.շ.կ.) 909. 0—12

Բացված է բաժանորդագրութիւն 1916 թ.
XI ՏԱՐԻ „ԽԱԹԱԲԱԼԱ" XI ՏԱՐԻ
Երգիծաբանական սատիրական գունատիպ պատկերազարդ շաբաթաթերթ։
«ԽԱԹԱԲԱԼԱՆ» լոյս է տեսնում ռուսական և եւրոպական իւրատեսակ լաւագոյն թերթերի օրինակով։
Տարեկան գինն է ամեն տեղ 5 ռ.։
Կէս տարվանը . . 3 ռ.։
Արտասահմանում . . 6 ռ.։
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Գործակալներն ու բաժանորդագրողները դիմում են հեռահեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція «Хатабала» կամ Tiflis (Caucase) Rédaction «Khatabala».
(հ. հ. կ.) 940. 6—5

ЛОЗУ ՏԵՍԱԼ
ՊԱՏԱՆԻ ամանախ I—II գրքոյկը։ Բովանդակութիւն.— ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ (պօէմ) Յ. Ղարիբեան, ՊԱՇԱԿԱՏԵՂՈՒՄ—Ն. Տիրոսենց, ՂԱՐԻԲ ԱՆՑՈՐԴԻՆ (բան.) Գ. Մխիթարեան, ԿԵԱՆՔԻ ՀԷՔԵԱԹԸ—Վ. Գալֆայեան, ԵՐԲ ՄԵՆԱԿ ԹՈՂՆԵՍ—(բան.) Մեծատուհեան, ԱՂՈԹՔԻ ՄՈՄԸՐ գրքից (բան.) Ասուրջ, ԸՆԿԵՐՈՋՍ ՕՐԱԳՐԻՑ—Մ. Եվրիկ, * *(բան.) Վ. Ադաեան, ԲԻՒՐԵՂԻ ԺՊԻՏՆԵՐ-ից (բան.) Մ. Պետրոսեան, ՇԱՄԲՈՒՆ ՎՐԱ (արձ. բան.) Ֆ. Խաֆայէլ, ԵՐԵՔ ՊՕՇՄ (Ր. Տագորից) Հ. Թումանեան, * *(բան.) Մ. Մելքոնեան, ԳՐԱԿ.-ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՄԷՋ—Բարունակ, ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—Արմենակ, Պօստ-արկդ խմբագրութեան կողմից, 1914—1915 թ. «Պատանի»-ի բովանդակութիւնը։ ԳԻՆՆ Է 50 ԿՊ.։
1914 թ. դրսի բաժանորդները գրքոյկն ստանալու համար պէտք է ուղարկեն 20 կոպ. նամակագրոշմ, իսկ Թիֆլիսի բաժանորդներն ստանալու են խմբագրութիւնից վճարելով 20 կ.։ Խմբ. հասցէն՝ Тифлисъ, Ходживанская № 5, М. Эприкянъ. 969. 1—1

ОТКРЫВАЕТСЯ ПОДПИСКА НА 1916 Г.
На журналъ
„ВѢСТНИКЪ ЕВРОПЫ"
(51-ый годъ изданія)
Основанный М. М. СТАСЮЛЕВИЧЕМЪ, издаваемый (съ 1909 г.) М. М. Ковалевскимъ подъ редакціей К. К. Арсеньева, Д. Н. Овсянико-Куликовскаго и А. С. Посникова, ПРИ БЛИЖАЙШЕМЪ УЧАСТІИ: И. В. Жилкина, М. М. Ковалевскаго, Н. А. Котляревскаго, В. Д. Кузьмина-Караваева, А. А. Мануилова, М. А. Славинскаго, Л. З. Слонимскаго и К. А. Тимирязева.
Подписная цѣна:

	На годъ:	На ½ г.:	На ¼ г.:
Безъ доставки въ ПЕТРОГРАДѢ и МОСКВѢ.	15 р. 50 к.	7 р. 75 к.	3 р. 90 к.
Съ доставкой въ ПЕТРОГРАДѢ и МОСКВѢ.	16 » — »	8 р. — »	4 р. — »
Съ пересылкой въ другія мѣста Россіи . .	17 » — »	8 р. 50 к.	4 р. 25 к.
За границу, въ госуд. почт. союза.	19 » — »	9 » 50 »	4 » 75 к.

Отдѣльная книга журнала съ доставкой и пересылкой 1 р. 50 к.
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:
Въ Петроградѣ: Въ Главной Конторѣ журнала, Моховая 37; въ книжныхъ магазинахъ: «Новаго Времени», Невскій, 40; Березовскаго, Колокольная, 14; т-ва М. О. Вольфъ, Невскій 13 и въ Гост. Дворѣ.
Въ Москвѣ: Въ Отдѣленіи Конторы журнала Тверской бульваръ, 15; въ книж. маг. Н. Н. Карбасникова, на Моховой, и въ Конторѣ Н. Печковской, въ Петровскихъ линіяхъ.
Въ Кіевѣ: Въ книжномъ магазинѣ Н. Я. Оглоблина, Крещатикъ, 29.
Въ Одессѣ: Въ книжн. маг. «Образованіе», Ришельевская 12; въ книж. маг. „Одесскихъ Новостей", Дерибасовская, 20; въ книжн. маг. „Трудъ", Дерибасовская, 25.
(հ.) 904. 4—4

Бичъ человѣчества побѣжденъ.
На леченіе хроническаго трипперъ нужно потерять только 30 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга, который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.
ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.
Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ" и коробку пилюль разрѣшенныхъ медиц. совѣтомъ за № 1295 а ежедневно терпя на леченіе только двѣ минуты въ теченіи трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пяти лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ" исцѣлило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.
Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излечитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указывающаго, что болѣзнь не излечена, я немедленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.
Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ" основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.
За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ", и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излеченіе, на что имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить, что случаевъ неизлеченія препаратомъ „рапидъ" нѣтъ и каждый больной, употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ" безусловно излечивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.
Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что моя увѣренность въ средствѣ „рапидъ" и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому, выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ", я вместѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлеченія.
Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ лѣченія) и коробка пилюль 3 руб. Наложенн. плат. и съ пересылкой 10 р. Наложенный платежъ высылается только по полученіи 3 руб. задатка.
Заказы и требованія адресовать исключительно въ Кавказское отдѣленіе Московской Лабораторіи, М. Деламуре, Тифлисъ Эриванская пл. Пушкинская 3 отд. 6 | М верхній этажъ.
50—17 609. (5.)

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.